ՀԱՅՐԵՆԻՔՆ ԱՆՄՈՌԱՑ Է

(Նյութեր Վանի և Վանի հերոսամարտին նվիրված հուշակոթողի պատմությունից)

Վանում 1915 թ. ապրիլյան հերոսամարտում թուրքական զորաբանակի դեմ տարած հաղթանակից հետո՝ վանեցիները ստիպված եղան բռնել գաղթի ճանապարհը: Հայտնի է, որ դա կատարվեց տեղի հայությանը օգնության հասած ռուսական բանակի նահանջի պատճառով: Վանեցիների մի մասը տեղավորվեց Արևելյան Հայաստանում, մյուս մասը սփռվեց աշխարհով մեկ: Բայց հայրենիքի հիշատակն անմոռաց մնաց վանեցիների՝ ինչպես մեծերի, այնպես էլ մանուկների, նաև իմ սրտում: Հայրենակարոտ վանեցիները մի հարցում միակարծիք եղան. հայրենիքի հիշատակը հավերժացնել մի կոթողային հուշարձանով:

Գաղթի ճանապարհով անցած «որբանոցային» սերնդին պատկանող վան-վասպուրականցիներն այդ հարցով դիմեցին Խորհրդային Հայաստանի իշխանությունների ղեկավարներին: Ստորև հրապարակում եմ իմ արխիվում պահպանված այս հարցին և հուշակոթողի կառուցման իրադարձություններին վերաբերող փաստաթղթերի մի մասը:

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

–1–

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԸՆԿ. ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ
ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ ԸՆԿ. ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀԱՅԿ. ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԸՆԿ. ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Մեր հանրապետության հարգարժան ղեկավարներ.

Վան-Վասպուրականի զավակները նշանակալից ավանդ են մտցրել հայ ժողովրդի հոգևոր և նյութական կյանքի բազմազան բնագավառներում:

Թուրքական յաթաղանի մոլեգնության ժամանակ նրանք կազմակերպված հերոսամարտ տվին ու դրանով իսկ բնաջնջումից ազատեցին Վասպուրականի ժողովրդի զգալի մասին ու հաղթելով՝ հանգրվան գտան Արևելյան Հայաստանում ու աշխարհի տարբեր մասերում: Նրանց լավագույն ներկայացուցիչները, հավատարիմ իր ժողովրդի կենսական շահերին, ակտիվ մասնակցություն ունեցան Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը և անցած 50 տարիների ընթացքում նվիրվեցին մեր նոր կյանքի կառուցմանը ժողովրդական տնտեսության և մշակույթի տարբեր բնագավառներում՝ տալով ակնառու կուսակցական ու պետական

գործիչներ, արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառի ղեկավարներ, զինվորականներ, գիտնականներ, մշակույթի անվանի մարդիկ և այլն:

Մենք բարի նախանձով ենք նայում, որ մեր վերածնված հողի վրա վերականգնվում են Հայաստանի պատմական անունները՝ դրանով իսկ հավերժացնելով մեր հերոսական ժողովրդի պատմական անցյալը:

Եղեռնի սերնդին պատկանող Վան-Վասպուրականի մի խումբ զավակներս, որ եռանդուն մասնակցությունն ենք բերել Սովետական Հայաստանի բարգավաճմանը, դիմում ենք ձեզ և խնդրում հավերժացնել մեր կորցրած հայրենիքի անունը՝ Նոր-Վան կամ Նոր-Վասպուրական կոչելով Սևանա լճի արևելյան ափին Արտանիշի լճախորշի ափին կառուցվելիք արդյունաբերական քաղաքը:

Հուսով ենք, որ մեր դիմումը ուշադրության կարժանանա:

«Վասպուրական» հայրենակցական
միության հիմնադիր անդամները

1. Ադոյան Ադո – *«Լենինյան ուղիով»-ի խմբագիր*
2. Ազդոյան Ազատ – *տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ*
3. Արարքցյան Գուրգեն – *տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ*
4. Աբրահամյան Արտաշես – *ՀՍՍՀ Մին. սով. գործ. կառ. տեղակալ*
5. Ավետիսյան Վարդան – *պատմ. գիտ. թեկնածու*
6. Աճեմյան Վարդան – *ՍՍՀՄ ժող. դերասան*
7. Գասպարյան Արծրունի – *տեխ. գիտ. դոկտ., պրոֆեսոր*
8. Դովլաթյան Աբեթ – *Կանազի դիրեկտոր*
9. Կապուտիկյան Սիլվա – *բանաստեղծուհի*
10. Կծոյան Արծրունի – *բժ. գիտ. դոկտ., պրոֆեսոր*
11. Իսկանդարյան Գրիգոր – *Հայկ. ՍՍՀ վաստ. շինարար*
12. Հարությունյան Վարազդատ – *ճարտ. դոկտ., պրոֆեսոր*
13. Հարությունյան Արծրունի – *Հայկ. ՍՍՀ ժող. դերասան*
14. Հովհաննիսյան Ռուսեթ – *բանաս. գիտ. դոկտ., պրոֆեսոր*
15. Հովհաննիսյան Եղիշե – *արվեստաբան*
16. Հյուսյան Մինաս – *բանաս. գիտ. դոկտ., պրոֆեսոր*
17. Հացագործյան Արսեն – *վաստ. դասատու*
18. Հովնանյան Արտաշես – *թոշակառու*
19. Ղազանջյան Վարդան – *պատմ. գիտ. թեկնածու*
20. Մանասյան Սիրակ – *«Գիտություն» ընկ. պատ. քարտուղար*
21. Մանասյան Սամվել – *քանդակագործ*
22. Մանվելյան Մանվել – *Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս*
23. Մելքոնյան Հայկ – *Հայկ. ՍՍՀ Մին. սով. գործ. կառավարիչ*
24. Մելքոնյան Ասլան – *պատմ. գիտ. թեկն., դոցենտ*
25. Մկրյան Մկրտիչ – *բանաս. գիտ. դոկտ., պրոֆեսոր*
26. Մովսեսյան Եղիշե – *քիմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր*
27. Մկրտչյան Հարություն – *գրող, պրոֆեսոր*
28. Մուրադյան Հայրիկ – *երգիչ, թոշակառու*
29. Պետրոսյան Ազնիվ – *կենս. գիտ. դոկտ., պրոֆեսոր*

30. Զրբաշյան Մխիթար – *Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս*
31. Զրբաշյան Էդվարդ – *բանաս. գիտ. դոկտ., պրոֆեսոր*
32. Սարմեն – *բանաստեղծ*
33. Սոլախյան Արշավիր – *թոշակառու*
34. Սեդրակյան Մարգար – *կոնյակի գործ. գլխ. մասնագետ*
35. Վեսպեր *(Մ. Դաբաղյան)* – *բանաստեղծ*
36. Սալախյան Բենիամին – *վաստ. գյուղատնտես*
37. Շահինյան Արշամ – *քանդակագործ*
38. Շատվորյան Վահրամ – *իրավաբան*
39. Ծովյան Վահան – *հին բոլշևիկ*
40. Դիլաքյան Թաթուլ – *Հայկ. ՍՍՀ. ժող. դերասան*
41. Հացագործյան Զավեն – *տեխ. գիտ. դոկտոր*
42. Սապոնջյան Օգսեն – *Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթ. անդամ, տեխն. գիտ. դոկտ. պրոֆեսոր*

<1964 թ.>



Վանա բերդը հյուսիս-արևմուտքից

–2–

ՀԱՅԿ. ՍՍՀ-Ի ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻՆ

1915 թ. Վասպուրականի ապրիլյան հերոսամարտը հայ ժողովրդի դիմադրական կորովը հավաստող ամենապայծառ օրինակներից մեկն է, սակայն, դժբախտաբար, այն մինչև հիմա իր արժանի տեղը չի գրավել ոչ մեր պատմագրության, ոչ էլ մարդկանց գիտակցության մեջ:

Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետը 1970 թ. օգոստոսի 11-ին որոշում ընդունեց Երևանում կառուցել Վասպուրականի հերոսամարտը խորհրդանշող հուշարձան՝ տրամադրելով դրա համար 27.0 հազ. ռուբլի: Ճարտարապետ Ջիմ Թորոսյանը ներկայացրեց նախագիծը, ընտրվեց հուշարձանի վայրը՝ Երևան-Հոկտեմբերյան խճուղու եզրին, այս ամենը լայնորեն համբավվեց Հայաստանի և Սփյուռքի թերթերում, և, սակայն, այս բոլորից հե-

տո, ինչ-ինչ պատճառներով Հայաստանի կոմկուսի նախկին ղեկավարությունը դադարեց ընթացք տալ կառավարության որոշմանը:

Սույն նամակով մենք դիմում ենք Կենտկոմի բյուրոյին և խնդրում ընթացքի մեջ դնել վերոհիշյալ որոշումը և իրականացնել Վասպուրականի հերոսամարտի հուշարձանի կառուցումը: Մեր կառավարության հեղինակության համար անպատվաբեր է ետ կանգնել իր իսկ ընդունած որոշումից, մանավանդ որ այդ որոշումը մեծ ոգևորություն է առաջացրել Սփյուռքում, գնահատվել որպես սովետական իշխանության և Կոմունիստական կուսակցության կողմից մեր պատմությունը արժանվույնս գնահատելու մի նոր փաստ, իսկ վասպուրականցիները մոտ 40.000 դոլար են հավաքել այդ նպատակի համար ու դեռ շարունակում են այդ գործը ծավալել:

Սակայն անկախ արտասահմանյան այս արձագանքներից, մենք գտնում ենք, որ Վասպուրականի հերոսամարտը ինքնըստինքյան արժանի է ոչ միայն այդ համեստ հուշարձանին, այլ ավելի ակնառու հիշողության, որովհետև այդ երեսունօրյա խիզախ ինքնապաշտպանությունը՝ ավարտված ռուսական զորքի հաղթական մուտքով, խտացած արտահայտությունն է իսկական համաժողովրդական, հողի և մուրճի մարդկանց անձնուրաց հայրենասիրության ու նաև այն մեծ սիրո և հավատի, որ դարեր շարունակ մեր ժողովուրդը ունեցել է հանդեպ Ռուսաստանի, ռուսական զենքի փրկարար առաքելությանը:

Շարադրել է Միլվա Կապուտիկյանը
Օգոստոս, 1975, Հանքավան



Վանա լիճը և շրջակա բնակավայրերը

–3–

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԻՑ

Մեծայարգ
Պրն Վարազդատ Յարութիւնեան
նախագահ Հայաստանի Ճարտարապետներու Միութեան

Ազնիւ հայրենակից.

Սոյն տարւայ յունուարի սկզբին Ձեր՝ Արմէնբրէսի միջոցաւ Վանի յուշարձանի առթիւ տւած տեղեկատւութիւնը մեծ ուրախութեամբ լեցուց բոլոր վասպուրականցիներուս սիրտերը: Վերջապէս իրականութիւն կը դառնայ բոլորիս ցանկութիւնը: Վասպուրականցիներս երախտագիտական զգացումներ ունինք Հայաստանի իշխանութեան հանդէպ: Ըստ իմ խոստմանս՝ գնահատանքի նւէր մը պիտի հաւաքենք և տրամադրենք Հայաստանին:

«Վանի հերոսամարտի յուշարձան» վերնագիրը, որ երևցաւ արտասահմանի հայ թերթերու մէջ, երևի իրենց թերթերու կողմէ ստեղծւած է, քանի որ Ձեր գրութեանը մէջ վասպուրականցիներու 1915-ի գարնան մղած հերոսամարտի մասին է, թէ ինչպէս Վանը պաշտպանողները Քաղաքամիջի, Այգեստաններու և շրջակայ գիւղերու մէջ մարտնչեր են: Շատ ճիշտ էք, վասպուրականցիները ամէն տեղ Արծկէ (Ալճաւազ), Թիմար, Արճակ, Հայոց Ձոր, Շատախ, Փիսանդաշտ, Կարճկան, Մոկս, Ոզմ, Խիզան, Սպարկերտ, Քաղաքամէջ և Այգեստանը և մի քանի այլ վայրեր 1915-ի մարտի 29-էն մինչև մայիսի 15-ը կուեցին և յաղթեցին: Մեր գաւառապետերը, մանաւանդ Լեռնապարի շրջանի ժողովուրդները շատ զգայուն են եւ իրաւացիօրէն թէ բերանացի և թէ նամակներով դիտողութիւն կընեն:

Օննիկ Մխիթարեանի օրը օրին գրած ընդարձակ «Վանի հերոսամարտ» գիրքը, որպէս ականատեսի, Այգեստանի հերոսամարտի կռիւներուն լրիւ նկարագրութիւնն է միայն, ի յիշատակութեամբ շրջակայ վայրերու կռիւներուն:

Այս գրքի գոյութեան պատճառաւ շատեր միայն Վանի հերոսամարտ անունով կը հիշատակեն: Շատ անգիտակներ Վասպուրական չրգիտեն և Վան միայն գիտեն: Վանի նահանգ (Վան վիլայեթ) ես իմ խօսակցութիւններուս ընթացքին միայն Վասպուրականի հերոսամարտ կանւանեմ, նկատի ունենալով թէ իրականութիւնը և թէ գաւառացիներու դիւրազգացումը:

Միացեալ Նահանգներու վասպուրականցիներս արդէն կազմած ենք «Վասպուրականի հերոսամարտի յուշարձանի յանձնախումբ» անունով մարմին մը և արդէն հաւաքած մոտ 20.000 տոլար, պիտի հասցնենք 30 և թերևս 40.000 տոլար գումարի մը: Ես պիտի ջանամ շատ աւելին հասցնել և զայն նւիրել Հայաստանին որպէս գնահատանքի փոքր արտայայտութիւն: Մեր ամէն մի զոհողութիւն շատ պզտիկ է հանդէպ այն զոհողութեան, որ մեր նահատակւած հերոսները նւիրեցին իրենց ամբողջականը, որ մենք ապրինք: Ըստ իս կէս միլիոնէն աւելի է ապրող վասպուրականցիներուս համրանքը, որի մեծագոյն տոկոսը հայրենիքին մէջ կապրի:

Ձեզմէ պիտի խնդրեմ, որ մէկ-մէկ մեզ տեղեակ պահէք հիմնադրութեանը և անոր յառաջադիմութեան մասին, մէկ-մէկ ալ նկարներ եթէ հնար է: Այս կարգի տեղեկութիւններ մեծ քաջալերանք պիտի ըլլան մեր աշխատանքին:

Կարևոր է գիտնալ նաև թէ ինչ խողովակով և ինչ հասցէով մենք կապ պիտի պահենք Ձեր վարչութեան հետ:

Գործի լրումին վասպուրականցիներու մեծ խմբակ մը պիտի գանք Հայաստան և ուխտի գնանք մեր նահատակներուն նվիրուած սքանչելի յուշարձանին:

Կը ցանկամ մեծ յաջողութիւն գործին կապուած բոլոր անձնակազմին, Ձեզ և Պրն Ջիմ Թորոսեանին:

Մարտի 14, 1974
Անկեղծ սիրով և բարևներով Ձերդ
Dajad Terlemezian *հայրենակից Տաճատ Թերլէմէզեան*[*]
77 Franklin Turnpike
Waldwick, N. J. U.S.A. 07463

–4–

Սիրելի հայրենակից
Վարազդատ Հարությունյան

Մենք Երևան քաղաքում ենք, և եթե սովորական խոսակցություն լիներ հեռախոսով կանհանգստացնեի Ձեզ, բայց բանը դա չէ, և մեր խոսակցությունը շատ լուրջ և կարևոր բնույթ ունի: Խոսքը մեր սիրելի հայրենիքի Վան-Վասպուրականի մասին է: Ինչպես Ձեզ հայտնի է, հայտնի պատճառներով հայ ժողովուրդը 1915 թ. թողեց իր սիրելի բնակավայրը և կարծես թե մինչև մահը կարոտով կսպասի դրանց արդարացի ազատագրումը:

Այդ նվիրական վայրերն են Վան, Զեյթուն, Մուշ, Կիլիկիա, Սեբաստիա, Երզնկա, Մալաթիա և այլն: Հայ ժողովուրդը իր կարոտը հարազատ վայրերից առնելու և երիտասարդ սերունդներին չմոռանալու պատճառով սկսեց պատմական Հայաստանի շատ բնակավայրերի անունով կոչել նոր ստեղծվող բնակավայրերը. այսպես՝ Նոր Զեյթուն, Կիլիկիա, Սեբաստիա, Մալաթիա, Հաճն, Խարբերդ և այլն: Այս բոլորը շատ դուրեկան է, բայց խոսքը մասնավորապես այսօր ես բացում եմ մեր հայրենիքի՝ բնակավայր Վան-Վասպուրականի մասին, իհարկե, մեզ բոլոր վայրերն էլ թանկ և նվիրական են, ուստի ես առաջ եմ քաշում մի հարց. արդյոք հնարավոր չէ՞ մի նոր թաղամաս կամ նոր քաղաք անվանել Վան-Վասպուրական, իսկ Վասպուրական-վանեցիները իրենց արժանի ներդրումները կանեն այդ գործում: Այս հարցով Ձեզ եմ դիմում որպես աֆտարիտետնի (հեղինակավոր – խմբ.*) վասպուրականցու-վանեցու և որ կարևորն է ճարտարապետների միության պատվավոր նախագահ, որին քաղսովետը և պարտիական և սովետական օրգանները խիստ դրական կերպով են ճանաչում: Որքան ես գիտեմ Ամերիկայում և Բեյրութում կամ թե այլ տեղ կա Վասպուրական-վանեցիների ընկերություն, արդյոք հնարավոր չէ՞ ես ներքաշել այս գործում: Սիրելի Վարազդատ. Դուք պետք է համապատասխան մարմիններին հասկացնեք, որ Վան-Վասպուրականը, բացի մեզ համար նվիրական հին վայր լինելուց, այլ նաև Վան քաղաքատիպ վայրը այն տեղն էր, ուր հիմնականում ձևավորվեց հայ ժողովուրդը և նրա 1-ին պետականությունը (Վանը Ուրարտուի 1-ին մայրաքաղաքն էր՝ Տուշպա և այլն):*

[*] Հուշակոթողը կառուցելու նախաձեռնողն է:

Կրկնում եմ, ահա դրա համար էլ ես Ձեզ խնդրում եմ օգտագործել Ձեր՝ հայկական իրականության մեջ և արտասահմանում հայտնի նշանավոր մարդու անունը և օգնել նոր թաղամաս կամ նոր քաղաք ստեղծելուն:

Հաստատ համոզված եմ, որ այդ գործում Ձեզ կօժանդակեն պարտիական և սովետական օրգանները, իսկ ինչ վերաբերում է մեզ՝ Երևանի և Հայաստանի վասպուրականցիներիս, դրանում Դուք համոզվեք, որ մեր օգնությունը շատ ուժեղ և սրբազան կլինի: Անհրաժեշտ է այս հարցը բորբոքել-վառել բոլոր վասպուրականցիների սրտերում՝ լինի դա Հայրենիքում ու արտասահմանում:

Սիրելի Հարությունյան. թախանձագին խնդրում եմ լինել այս գործի առաջին մունետիկը – նախաձեռնողը և պատմությունը այդ երբեք չի մոռանա: Կրկնում եմ, Ձեր մասնագիտությունը, Ձեր տաղանդը և հասարակական դիրքը այդ բոլոր հնարավորություններն ունեն:

Գիտեմ նաև, որ Դուք ոչ մի դժվարությունից չեք վախենում և կլինեք մեր խնդրած մտահղացման հեղինակը:

Թող պատմությունը այս ևս ունենա...

Մեծ հարգանքով Ձեր մեծ բարեկամ և հայրենակից՝
Մարգար Սեդրակի Սեդրակյան
<1974 թ.>

–5–

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԵԱՆ ԿՌԻՒՆԵՐԸ ԵՒ ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ԳՐԵՑ ՏԱՃԱՏ ԹԷՐԼԷՄԷԶԵԱՆ (1975 Թ.)

59 տարիներ առաջ, ապրիլի 7, 1915-ին, Վասպուրականի ժողովուրդը իր Աշխարհքի տարածքին ոտքի կանգնեցաւ եւ ուժգին հարուածներ տուաւ թշնամու քիթ ու մռութին: Ձեռքն առաւ հնարաւոր ամէն տեսակի զէնք, հրացան, մաուզեր, ռումբ, քար ու փայտ, արիութիւն, հայրենասիրութիւն, անձնուիրութիւն, խորամանկութիւն, գիտական եւ զինական ամէն կարգի մեքենականութիւն: Վասպուրականի ամբողջ տարածքին մէկ ծայրէն միւսը, մեր նախնիքները՝ առանց ընկրկելու, միշտ թշնամուն յաղթելով փախուստի մատնեցին նրան: Ժողովրդական այդ կռիւները միայն ինքնապաշտպանական չէին, կատարեալ պատերազմ էր՝ յաղթանակի և ազատութեան ի խնդիր: Յաջողութեան առաջին պայմանը բացարձակ համերաշխութիւնն էր:

Կարգապահութիւնը, կատարեալ ռազմավարութիւնը՝ վասպուրականեան-հայկական: Մահ կամ ազատութիւն նշանաբանը մէկ կողմ էր ձգուած և անպայման յաղթանակ նշանաբանն էր որդեգրուած: Հայերը քիչ էին, թիւրքերը՝ բազմաթիւ. մէկի դէմ հարիւր: Հայը համրուած միջոցներ ունէր, թիւրքը՝ անհաշիւ: Հայը վճռական յաղթանակի համար, թիւրքը՝ գարշահոտ ոճիրի համար: Եւ Վասպուրականը յաղթանակեց:

Ռազմիկները զինուոր էին, խմբապետ, շրջանապետ, զինուորական մարմին, ղեկավար: Բոլորը իրենց պարտքին եւ դիրքին վրայ՝ վճռական և անյողդողդ: Ո՞ր մէկի անունը յիշեմ: Ոզմցի Լաթօն, Ուրանցի Վարդան,

Լեւոն Շաղօեան, Ալճաւագցի Ղևոնդ, Շիրին, Շատախցի Տիգրան, Պաղիկ թէ Ազատ, Շաղպաղեցի Օհաննէս, Ալուրցի Արշակ, Աւանցի Աբէլ, Շուշանցի Նշան, Ղարաբաղցի Արամ, Վանեցի Արմենակ, Հայկակ, Դանիէլ, Վարազդատ, Շիրվանեան Վաղարշակ, Պոռազանջեան, Ճիտէճեան Գէորգ, Փափազեան եղբայրներ, Լօռթօ, Կարօ ու Միւօ: Վերջապէս՝ բոլորը, բոլորը: Ամէնուն անունները յիշել սիւնակներ պիտի լեցնէ: Բաւական է հեգել Ա. Բ. Գ. էն մինչև Օ. Ֆ., ու յիշած կըլլայ բոլորը:

Ամբողջ 45 օրեայ կռիւներու ընթացքին՝ հայերը ունեցան միայն մէկ քանի տասնեակ զոհեր, խլելով թշնամիէն հազարաւոր դիակներ:

Վասպուրականեան այս կարգապահ, մարզուած և կռիւներու մէջ թրծուած փաղանգը յետագային իր կուռ շարքերով, ռազմավարական սքանչելի ճարպիկութիւններով և ղեկավարներով՝ մասնակցեց 1918-ի Սարդարապատեան կռիւներուն, եւ բոլորի հետ միասին յաջողցուցին Մայիսեան յաղթանակները, թիւրքական 4000 և աւելի դիակներու վրայ կոխոտելով՝ հետապնդեցին թշնամին եւ դուրս քշեցին մեր երկրէն:

Ռազմական այս երկու յաղթանակներով (Վասպուրական և Սարդարապատ) ստեղծուեցաւ Հայաստանը:

ԵՎՍ ՄԻ ՆԱՄԱԿ ՏԱՃԱՏ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻՑ՝ ԳՐՎԱԾ 1975-ԻՆ

Սրանից մի քանի տարի առաջ, Հայաստանի ներկայ կառավարութիւնը սքանչելի գաղափար ունեցաւ կանգնելու Եղեռնի Յուշարձանը, ապա՝ հսկայ յուշարձան մը, Սարդարապատեան Յաղթանակներու յիշատակին: Անոնց ուխտի գնացողները կը սքանչանան, ծունկի կուգան կամարներուն տակ եւ յաւերժական հուրին մօտ, որոնք կը խորհրդանշեն միլիոնաւոր զոհերը: Կը խայտան Սարդարապատը պաշտպանող ցուլերով և արծիւներով: Կը տեսնեն քանդակներ, հայ այրուձիին կոռմէ կոխոտումը օձերու և վիշապներու: Այո, մեր օրերու հայն ալ եղաւ վիշապաքաղ:

Վասպուրականցիները անհունօրէն երախտապարտ կը զգան իրենք զիրենք՝ հանդէպ հայկական կառավարութեան, որ որոշեց շինել Վասպուրականի Յուշարձանը, եւ որի մասին կարդացինք ճարտարապետ Վարազդատ Յարութիւնեանի գրութիւնը՝ հայ թերթերու մէջ: Ըստ այդ տեղեկատուութեան, հսկայածաւալ այդ կառոյցը, Վանա ծովը յիշեցնող իր շատ գեղեցիկ լճակովը, Սարդարապատի ճամբուն վրա, կը ներկայացնէ Վանի բերդը, շրջապատող պարիսպով, մեջտեղը թառած Արծիւ Վասպուրականին, ի նշան արիութեան: Սքանչելի յղացում:

Արտասահմանի երախտապարտ վասպուրականցիներս որոշած ենք, իբրև գնահատութիւն, վերոյիշեալ յուշարձանի շինութեան առթիւ ստեղծել կոկիկ գումար մը՝ յատկացնելու համար Հայաստանի որևէ գիտական հիմնարկի համար գիտական գործիքներու գնման:

Ընտրուած է «Վասպուրականի Հերոսամարտի Յուշարձանի Յանձնախումբ» անունով մարմին մը, հինգ հոգիէ բաղկացեալ, որուն ես ալ կը մասնակցիմ: Մեր նպատակն է գոյացնել վերոյիշեալ գումարը: Ով գիտէ, եթէ մեր հայրենակիցները օգնեն մեզի, թերևս հնար լինի ստեղծել Աղթամար – Նարեկ – Վարագ կառոյց մըն ալ Խորհրդային Հայաստանի մէջ՝ մեր անմահանուն վանքերը յիշեցնող:

Գործը յաջող ընթացքի մէջ է: Նիւ Ճըրզին, Պոսթընը և Քալիֆորնիան յաջող ձեռնարկներու կը պատրաստուին:

Իմ վրայ պարտականութիւն է դրուած դիմումներ կատարելու հեռաւոր իմ հայրենակից վասպուրականցիներուն՝ անխտիր: Երախտապարտ եմ իրենց և շնորհապարտ, որ չեն մերժեր զիս եւ լիաբուռն կարձագանքեն խնդրանքներուս: Հնչակ-Դաշնակ-Արմենակ (ինչպէս կըսէինք Վանի մէջ)՝ անխտիր: Վասպուրականեան համերաշխութեամբ, հայրենասիրական մաքուր զգացումներով նամակներու հետ, կուղարկեն 100, 200, 300, 500 տոլարներու գումարներ, կը պատասխանէն Իրանէն, Ֆրանսայէն, Հարաւային Ամերիկայէն և Միացեալ Նահանգներու հեռաւոր վայրերէն:

Միայն ինծի ուղարկուածներու գումարը 6000-ը կանցնի: Յուզուած եմ և երախտապարտ՝ հայրենակիցներուս ցուցաբերած ոգիին համար: Երախտապարտ եմ նաև մի քանի ազնիւ ոչ վասպուրականցիներու, որոնք նոյնպէս կարևոր գումարներ ղրկած են:

Հայրենասէր իմ հայրենակիցներէս անոնք՝ որոնց հասցէները չունենալուս համար չեմ գրած, թող ներող ըլլան, և յիշելով մեր հայրերը՝ որոնք մեռնիլ յանձն առին որպէս զի մենք ապրինք, թող յարաբերութեան մէջ մտնէն յանձնախումբին կամ ինծի հետ, ուղարկելով իրենց սրտագին նուէրները:

Իմ հասցեն.

Dajad Terlemezian
77 Franklin Turnpike
Waldwick, N. J. U.S.A. 07463

Յանձնախումբի հասցէն.

Commitee for Victory
Monument of Vasbouragan
19 Dexter Ave.
Watertown, Mass. 02172

Վասպուրականցին պիտի արժևորէ իր արժանապատվութիւնը
Արշակ Մուրատեան եւ նուիրատուներ, 1200.00

1. Արմէն Թէրլէմէզեան	*300.00*	
2. Սիրուն Պաջիկեան	*300.00*	
3. Գրիգոր Աճէմեան *(Իրան)*	*300.00*	
4. Արմիկ Կանտօեան	*250.00*	
5. Հրաչ Դարբինեան	*200.00*	
6. Խորէն Թէրլէմէզեան	*200.00*	
7. Ռուբէն Պապօեան	*100.00*	
8. Արմենակ Մուրօեան	*100.00*	
9. Ազատ Ասլանենան	*100.00*	
10. Մկրտիչ Օհանէսեան	*100.00*	
11. Շահէն Մուրատեան	*100.00*	
12. Գրիգոր Սօլախեան	*100.00*	
13. Տաճատ Թէրլէմէզեան		*2000.00*
զաւակներ և թոռներ		

այլ նուիրատուներ՝ Մարտիրոս Գազանճեան, Վան-Տոսպ Շատիկեան Օհաննէս Հիւսեան, Անուշ Գրիգորեան, Յովհաննէս Թորիկեան, Սամուէլ Ռշտունի, Բարգէն Խանճեան, Գրիգոր Աթոռակալեան, Մէլիք Ազիզեան, Արսէն Կէօրկիզեան, Նշան Խաչատուրեան և այլն, և այլն, և այլն:

Համա-Վասպուրականի կենտ. վարչութեան ատենապետ Եղիա Մուրատեան կը գրէ ինծի. «Կը հաւաքեմ մեծկակ գումար մը և Պատգամաւորական ժողովին Ձեզ կը յանձնեմ: Տ. Թ.»:

–6–

Vartan Bandikian
22 Rue de Valdonne *22 յունուար 1975*
Marseille (13e) *Մարսեյլ*
Tel. 66-17-46

Յարգելի Տիար
փոռֆեսոր Վարազդատ Յարութիւնեան

Կը շնորհաւորեմ ձեր և ձեր ընտանիքի Նոր Տարին լաւագոյն մաղթանքներով, թող 1975 տարին լաւ, առողջութեան և յաջողութեան տարի մը ըլլայ:

Կարդացի Երեւան (Արմէնպրէս, յունուար 9-13) Փարիզի թերթին վրայ, Երեւան ի՞նչ տեսք պիտի ունենայ 2000 թվականին, ուր ճարտարապետ Ջիմ Թորոսեան ցուցափայտը ձեռքին կը բացատրէ, մանրամասնութիւն:

Ջիմ Թորոսեանի անուն կարդալով փափաքեցի երկու խօսք գրեմ մեր Վասպուրականի յուշարձանի մասին: Ամերիկայի յանձնախումբէն Դուք իմացած կը լինիք անշուշտ, անոնց աշխատանքները լաւ են. Յուշարձանի կառուցման նուիրատուութեան համար մասնակցութիւն մեզի Ֆրանսայի հայրենակիցներին ալ գրեցին, մենք կազմեցինք յանձնախումբ և լաւ յաջողութիւն ունեցանք. ամէն վասպուրականցին սիրով իր մասնակցութիւն բերաւ. կսպասենք յուշարձանի շինարարութեան սկսելու տեղեկութեան Երեւանէն:

Ամերիկայի յանձնախումբին, անոնք ալ մեզի պիտի տեղեկացնեն: Չեմ գիտէր մեր յանձնախումբը ձեզի գրած ունէ, որ Ամերիկայի մի երկու-երեք շրջանի հայրենակիցներ, շատ թերահաւատ են շինութեան և կսպասեն յուշարձանի շինութեան սկսելուն պաշտօնական տեղեկութեան, որ անմիջապէս պիտի բերեն իրենց նուիրատուութեան մասնակցութեան բաժին: Ուրեմն ինչքան շուտ ըլլայ, գործը այնքան յաջողութեամբ կը պսակուի:

Կը յուսամ, որ ճարտարապետ Ջիմ Թորոսեան յուշարձանի մակէթը լմնցած կը լինի:

Յարգանքներով
Վ. Պանդիկեան

–7–

ՎԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ

Հայ ժողովուրդի ազատատենչ զաւակներու մղած հերոսամարտերուն նուիրուած բազմաթիւ յուշարձաններ կանգնեցուած են հայրենի հողին վրայ:

Հայրենասիրական ազնիւ միտումներով կատարուած նոր նախագիծ մը ևս կը սպասէ իրականացման: Խօսքը վասպուրականցիներու 1915-ի գարնան մղած հերոսամարտի մասին է, թէ ինչպէս Վանը պաշտպանողները քաղաքամէջի, այգեստաններու և շրջակայ գիւղերու մէջ կենաց մահու ահաւոր կռիւ մղեցին թուրք բանակներու դէմ, եղեռնէն փրկուելու և գոյատևելու համար:

Այդ հերոսամարտի մասին շատ լսած էր ճարտարապետ Ջիմ Թորոսեան իր հօրմեն և հարազատներէն: Եւ ան յանձն առաւ Վանի հերոսամարտը յաւերժացնող նախագծի մշակումը:

Կոթողը մտայղացված է պարզ յօրինուածքով մը: Կը ներկայացնէ Վանայ անառիկ բերդին պարիսպները:

Պատը երկտակ է, երկու մեթր արանքով, հիմքը ունի 25 մեթր լայնք: Դեպի վեր ներբող 30 մեթր բարձրութեամբ պատը կը պսակուի գեղեցիկ ատամնաշարով: Կեդրոնը տեղաւորուած կամարային բացուածքի մը մէջ յաղթականօրէն թառած է արծիւ Վասպուրականին՝ ժողովուրդի արիութեան խորհրդանիշը:

Գլխաւոր ճակատին վրայ, ձախակողմեան մասին մէջ զետեղուած դուռը կը տանի դէպի զոհուած հերոսներու խորհրդանշական տապանատունը: Աջակողմեան ընդարձակ հարթութիւնը պիտի ծածկուի հերոսամարտին վերաբերող վիմագրութիւններով:

Երկու պատերու միջև պիտի ըլլան քարէ սանդուխներ, որոնք պիտի տանին դէպի տարբեր բարձրութեան կամարակապ հարթակներ, ուրկէ կը երևին Արարատեան դաշտի զմայլելի բնապատկերները:

Յուշարձանը կը նախատեսնուի կանգնեցնել Էջմիածին-Հոկտեմբերյան մայրուղիի եզրին, Սարդարապատի յուշարձանախումբը տանող ճամբուն վրայ:

Կոթողը վեր պիտի խոյանայ Արարատեան դաշտի մէկ հատուածին մէջ և ոչ մէկ բան պիտի խանգարէ անոր լիարժէք ընկալումը:

Կոթողի ետևի մասին մէջ աստիճանով՝ շրջապատուած քառակուսի տարածութիւն մը պիտի ստեղծուի, կեդրոնը՝ ջրաւազան:

Այս բոլորը դաշնութիւն պիտի կազմեն Հոկտեմբերեանի կարմիր տուֆով կառուցուած յուշարձանի սլացիկ ու յաղթական ծաւալին հետ:

Հայաստանի ճարտարապետներու Միութեան նախագահ՝
Վարազդատ Յարութիւնեան

«Հայ կեանք», ԱՄՆ, 23.01.1974 :



Հուշակոթողի առաջին նախագծային տարբերակի էսքիզ (ճարտ. Ջ. Թորոսյան)

** * **

Փաստաթղթերի ավարտին ավելացնեմ հետևյալ տեղեկությունները:

Չգիտես ինչու, հուշակոթողի կառուցման տեղը փոխվեց: Նույն ճարտարապետը՝ Ջիմ Թորոսյանը պատվեր ստացավ «Արծիվ Վասպուրականի» անվամբ հուշակոթող, որ պիտի խորհրդանշի վանեցիների հերոսամարտը, ինքնապաշտպանական կռիվներում նահատակվածների հիշատակը: Կառուցման համար տեղ հատկացվեց Աշտարակի այգեստանից դուրս, Աշտարակ-Թալին տանող խճուղային մայրուղու ձախ կողմում գտնվող մի բարձունքում:

Ընդառաջելով խնդրանքներին, կառուցման կազմակերպումը հանձն առավ Երևանի քաղաքային խորհրդի նախագահ Մուրադ Մուրադյանը, իսկ

կառուցումը հանձնարարվեց վանեցի շինարար՝ Ժիրայր Ասլանյանին: Ընթացքում պարզվեց, որ արժեքը կազմելու է Տաճատ Թերլեմեզյանի տրամադրած գումարի հնգապատիկը: Այդտեղ էլ օգնության ձեռք մեկնեց Մուրադ Մուրադյանը: Պակասը խոստացավ տրամադրել Քաղխորհրդի միջոցներից:

Անցնելով գործի, երկու անգամ ստիպված եղան հուշարձանի տեղը փոխել, որովհետև հիմքերը փորելիս երկու անգամ ի հայտ եկան դամբարաններ, որոնք, հնագետների կարծիքով, պատկանում են նախաուրարտական շրջանին, ուստի բաց վիճակում պահպանվեցին իրենց տեղերում:

Հուշակոթողի կառուցումը տևեց մեկուկես տարի և ավարտվեց 1981-ին: Նույն թվականի գարնանը տեղի ունեցավ հանդիսավոր ու բազմամարդ բացումը: Ներկա էին պետական այրեր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի վարչության նախագահ Վարդգես Համազասպյանը, Միլվա Կապուտիկյանը, տողերիս հեղինակը, Աշտարակի գլխավոր ճարտարապետ Գագիկ Գյուրջյանը, Վանի հերոսամարտի մասնակիցների մի մեծ խումբ, արտասահմանից՝ Տաճատ Թերլեմեզյանը (ԱՄՆ), Կարպիս Ջրբաշյանը (Փարիզ), Աղասի Դարբինյանը (Փարիզ), Վարդան Բանդիկյանը (Մարսել), մեծաքանակ մտավորականներ՝ գլխավորությամբ Սերո Խանզադյանի: Վանից գաղթած ու նրանց ժառանգների մեծ բազմություն էր հավաքվել այժմյան Արագածոտնի մարզի Աշտարակի, Ագարակի, Ոսկեհատի ու այլ գյուղերից, որոնց թվում երգողներ, պարողներ, արտասանողներ: Կաշկանդ տարիները հաղթահարվել էին: Մայր հայրենիքում, ներքին ու արտաքին սփյուռքում սկզբնավորվել էր հայրենասիրություն արտահայտելու ազատություն, այլևս չէր որակվում որպես ազգամոլություն:

Վերջապես արարողությունը սկսվեց, ժապավենը կտրվեց: Դղրդացին ծափերն ու հիացական բացականչությունները: Սրբազան Արարատով պսակված համայնապատկերի ֆոնին գծագրվեց «Արծիվ Վասպուրականի» հուշակոթողը՝ 30 մետր բարձրությամբ, իր սլացիկ, միակ թևը պարզած դեպի արևմուտք…:

Բացման խոսքով հանդես եկավ վաստակավոր ուսուցիչ՝ ավագ վանեցի, 99-ամյա Արսեն Հացագործյանը: Նրան հաջորդեցին Վիկտոր Համբարձումյանը, Վարդգես Համազասպյանը, Կարպիս Ջրբաշյանը և ուրիշներ: Իսկ Միլվա Կապուտիկյանը իր ոգեշունչ ճառն ավարտեց հետևյալ բանաստեղծությամբ.

Վասպուրական, մեր թանկ աշխարհ,
Մեր Սիփան սար, մեր Աղթամար,
Մեր նախնյաց Բերդ արծվասույր,
Մի ձեռքդ բահ, մի ձեռքիդ սուր:
Երազական մեր Վան քաղաք,
Մեր կարոտի աղբյուր ու ակ,
Ալիք կուտաս սրտիս միջով,
Ով ասի՝ լիճ, ես ասեմ՝ ծով:

Դլե յաման, դլե յաման,
Վերևում՝ դրախտ, ներքևում՝ Վան:

1915 թ. Վանի հերոսամարտը նշանավորող հուշակոթողը (ճարտ. Ջ. Թորոսյան)

Միլվային հաջորդեց Վարդգես Համազասպյանը: Պատմական իրադարձությունների իր վերլուծական, ընդարձակ ելույթում, նա մասնավորապես կանգ առավ 1915թ. ապրիլ-մայիսին Վանում տեղի ունեցած ինքնապաշտպանական հերոսամարտի վրա, նշեց, որ «Վանի հերոսական պաշտպանությանն իրենց մասնակցությունը բերեցին անխտիր բոլոր վանեցիները, տղամարդիկ, կանայք, նույնիսկ ծերունիներն ու պատանիները: Ու չնայած տասնապատիկ գերազանց թշնամու ուժերին, բարբարոսները ոչ միայն չկարողացան կոտրել հերոսական հայ ժողովրդի մի բուռ հատվածի՝ վասպուրականցիների դիմադրությունը, այլև քանիցս փշրվեցին քաղաքի պարիսպների տակ և պարտություն կրելով ամոթահար նահանջեցին, մինչև կհասներ ռուսական ազատարար բանակը և նրանց շարքերում հայ կամավորական ջոկատները: Հազիվ թե կարելի լինի հանդիպել մի ժողովրդի, որն այդքան երկար ժամանակ կարողանա նայել մահվան աչքերին և տառապալից ու ծանր հոգեվարքը պսակել հերոսական հաղթանակով: Վանի հերոսական պաշտպանության շնորհիվ փրկվեցին հազարավոր հայեր անխուսափելի կոտորածից և այդ փրկված մարդիկ սովետական իշխանության տարիներին տիտանական աշխատանքով բարձրացրին հայրենիքը մոխիրների միջից, շենացրին ի հեճուկս չար ու արյունոտ ժամանակների, ի հեճուկս բարբարոս մարդասպանների»:

…Երկար տևած այս առաջին դաշտահանդեսը դարձավ ավանդույթ: Դրանք մեծապես նպաստեցին հայրենասիրական ոգու կերտմանը, մնալ ու պահանջել, այդ ոգով դաստիարակել մատաղ սերնդին, վան-վասպուրականցիների մերձեցմանը, նույնիսկ՝ կորցրած հարազատների հայտնաբերմանը:

Առաջին դաշտահանդեսը, որի ժամանակ մեծ հանդիսությամբ բացվեց «Արծիվ Վասպուրականի» հուշակոթողը, հիմք ծառայեց «Վասպուրական» հայրենակցական միության հիմնադրմանը, որի հիմնադիր համագումարը տեղի ունեցավ 1990-ին, ընտրվեց վարչություն, ընդունվեց կանոնադրություն:

2006 թ. մայիսի երրորդ կիրակին տեղի ունեցավ քսանհինգերորդ դաշտահանդեսը, որն ընթացավ բացառիկ խանդավառությամբ, նաև հիմնադիրների պարգևատրմամբ:

Վստահ եմ, որ այս ազգօգուտ արարողությունը անվերջանալի կլինի, նաև կնպաստի շարունակելու ուղևորությունները դեպի «երկիր»:

16. 12. 2006